

ՊԱՐԱԳԱՆՆԵՐԻ ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Ա. Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Բայական անդամի պարագա լրացումները, որոնք ցույց են տալիս գործողության հատկանիշներն ու հանգամանքները, մեզանում համակողմանիորեն քննվել են¹, բայց դրանց կրկնությունը դուրս է մնացել ուսումնասիրողների տեսադաշտից: Մեր նպատակն այստեղ պարագաների կրկնության լուսաբանումն է, որն ունի տեսական ու գործնական կարևոր նշանակություն:

Պարագաները հանդես են գալիս տարբեր կարգի կրկնություններով, որոնք՝ ա) կամ դրսևորում են համապատասխան հատկանիշների ու հանգամանքների կրկնվելը որոշակի պարբերականությամբ և բ) կա՛մ էլ արտահայտում են տարբեր գործողությունների, եղելությունների միևնույն հատկանիշն ունենալը, միևնույն հանգամանքների մեջ գտնվելը: Առաջին դեպքում կրկնյալ և կրկնորդ պարագաները լրացնում են միևնույն լրացյալին, իսկ երկրորդ դեպքում՝ տարբեր լրացյալների:

Կրկնվելու հատկության դրսևորման առումով բոլոր պարագաները հավասարաթեք չեն: Նախադասության մեջ պարագաների կրկնվելու հաճախականությունը գրեթե ուղիղ համեմատական է իրենց սովորական (առանց կրկնվելու) գործածության հաճախականությանը: Ավելի հաճախ կրկնվում են ժամանակի, տեղի, ձևի ու չափի պարագաները, իսկ մյուս պարագաների կրկնվելը հիմնականում դիպվածային է:

1. *Ժամանակի պարագայի կրկնությունը:* Ժամանակի պարագան կրկնվում է ավելի հաճախ թե՛ պարզ և թե՛ բարդ նախադասության մեջ: Պարզ նախադասության ժամանակի պարագան կրկնվելիս ընդգծվում է գործողության կատարման ժամանակի նշանակությունը: Ժամանակի տևականությունը, որպես կերպավորության մի դրսևորում, ավելի է շեշտվում, երբ կրկնորդ պարագան ստանում է ժամանակի իմաստը սաստկացնող լրացում. *ինչպես՝ «Անցան դարեր, նորից դարեր»* (ԱԽ, 3, 120): «Ա՛խ, նրանք այնտեղ *հաճախ, շա՛տ հաճախ* խոց էին մտնում լոկ լուսաբացին» (ՊՍ, 4, 163): Կրկնյալ և կրկնորդ պարագաների արտահայտած ժամանակի իմաստն ավելի է ընդգծվում, երբ դրանք հանդես են գալիս բացականչական երանգով, կամ մանավանդ երբ այդ երանգին հավելվում է նաև զգացական ձայնարկության իմաստը. *օրինակ՝ «Օ, հաճա՛խ, հաճա՛խ, բարեկա՛մ, Ռրպեսզի հոգին չմրսի... Ես հիշել եմ վայրկյան-վայրկյան Կանաչած այգին Կարսի»* (ԵՉՊԲ, 125): Նման կառուցվածքում ժամանակի պարագայի կրկնյալ և կրկնորդ ձևերը նույն շեշտադրումը չեն ունենում, երբ կրկնյալն ունենում է պատմողական, իսկ կրկնորդը՝ բացականչական երանգ. վերաբերմունքային շեշտադրումն ընկնում է կրկնորդի վրա. *օրինակ՝ «Արդեն վաղուց, վաղո՛ւց թեպետ Կորցրած գորք, սպարապետ... Ծնունդ առան բյուր գորապետ, Գեներալներ ու... հայ մարշալ՝»* (ՊՍ, 4, 222): «Իր հոգին այն օրը, օ՛ր, այն օ՛րը ինչ քա՛ղցր հույզեր է հիճել...» (ԵՉՊԲ, 152):

¹ Տե՛ս Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Եր., 1965, էջ 379-392, Վ. Առաքելյան, Հայերենի շարահյուսություն, հ. Ա, Եր., 1958, էջ 331-395, Ս. Աբրահամյան, Ժամանակակից հայերենի քերականություն, Եր., 1969, էջ 314-321, նույնի՝ Ժամանակակից գրական հայերեն, Եր., 1981, էջ 301-308, Ս. Աբրահամյան, Ն. Պառնասյան, Հ. Օհանյան, Խ. Բաղիկյան, Ժամանակակից հայոց լեզու, հ. 3, Եր., 1976, էջ 244-269, Գ. Զահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքներ, Եր., 1974, էջ 419-446, Ռ. Իշխանյան, Արդի հայերենի շարահյուսություն. պարզ նախադասություն, Եր., 1986, էջ 225-237, Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու. շարահյուսություն, Եր., 1987, էջ 246-269, Ս. Գյուլբուդաղյան, Ժամանակակից հայերենի շարահյուսություն, Եր., 1988, էջ 185-197: և այլն:

Ժամանակի պարագան բարդ համադասական նախադասության տարբեր տեսակներում կրկնվում է գրեթե միատեսակ, առանց էական զանազանություններ դրսևորելու: Երբ կրկնվում է համադասական նախադասության մեկ բաղադրիչում, այդ կրկնությունն ունենում է կերպավորական նշանակություն. ինչպես՝ «Բորբերս Մոխիրն իմ խղճի - Եվ երբեք, երբեք Չզղջամ...» (ԵՉՊԲ, 128): «Մոսկվա՛, հնուց, հնուց, հնուց Մեր պապերի ու մեր մանուկների հուրոր երազանքն են եղել» (ՄՏԲ, 99-100):

Երբևէ համադասական նախադասության մի բաղադրիչում բառակապակցությամբ արտահայտված ժամանակի պարագան կրկնվում է այլ ժամանակի պարագաների միջարկումով: Ստեղծվում է բազմակի ժամանակի պարագաների թվարկվող մի շարք, որ սկսվում ու եզրափակվում է նույն պարագայով. ինչպես՝ «Տիգրանը կտրուկ նայեց. այդպիսի ցանկությունն նա ունեցել էր այդ հրացանը ձեռքն առնելու պահին, յոթ ամիս առաջ, պահակության առաջին օրը, հենց հրացանը ձեռքն առնելու պահին» (ՄԳՁՄ, 344):

Բաղիյուսական բարդությամբ արտահայտված ժամանակի պարագան հաճախ կրկնվում է բարդության բաղադրիչների շրջումով, որը որոշակիորեն խախտում է այդ պարագայի կրկնյալ և կրկնորդ ձևերի համարժեքությունը. ինչպես՝ «Բանտում ամենքը երազում են գիշեր ու ցերեկ, ցերեկ ու գիշեր, և ամեն մի բանտարկյալի աչքերի մեջ երազն է շողում, ազատության չքնաղ երազը» (ԱԻ, 3, 316):

Ընդհանուր ենթակայով բարդ համադասական նախադասության երկրորդ բաղադրիչում ժամանակի պարագայի կերպավորական կրկնությունը հաճախ պայմանավորված է լինում առաջին բաղադրիչի ժամանակի պարագայի հետ ունեցած հակադրությամբ. ինչպես՝ «Չէ՛ որ եկեղեցին, կարծես դիտմամբ, առավոտյան այդպես ուշ է զանգերը տալիս, իսկ երեկոյան՝ այդպես կանուխ, չափազանց կանուխ» (ԱԻ, 3, 248):

Ժամանակի պարագան կրկնվում է նաև բարդ համադասական նախադասության երկու կամ ավելի բաղադրիչ նախադասություններում՝ ցույց տալով տարբեր գործողությունների համաժամանակյա կատարվելը. ինչպես՝ «...Ֆիդայիները երբվանից՞ դիմադրուհայի ձայն չեն լսել, է՛, երբվանից՞ պար չեն բռնել» (ՄԳՁՄ, 476): «Մամվելը դարձյալ լոնց, դարձյալ նրա քունը չէր տանում» (ԲՄ, 458): «Առաջին անգամ է մեր տաղանդավոր հայրենակիցը հայտնվում մեր մեջ, առաջին անգամ է դուրս գալիս մեր հասարակության առջև, և առաջին անգամից ողջունում ենք հրճվանքով ու ծափերով» (ՀԹԸԵ, 473):

Ժամանակի պարագայի կրկնությունն իրացնող բարդ համադասական նախադասությունը կարող է բաղադրված լինել նաև միակազմ և երկկազմ բաղադրիչ նախադասություններից. օրինակ՝ «Նորից՝ ձայնեց, նորից ոչ մի պատասխան» (ԱԻ, 3, 188): «Այստեղ հիմա կոխվ է, մահ, ու աղջամուղջ է անորոշ, Մենք մեր սիրտն ենք պարզել հիմա - մահի հանդեպ՝ կարմիր դրոշ» (ԵՉԸԵ, 73): Նմանապես ժամանակի պարագան կրկնվում է նաև անվանական անդեմ միակազմ բարդ համադասական նախադասության մեջ, հաճախ նույնիսկ նրա բոլոր բաղադրիչներում՝ պայմանավորված գերադաս անդամների, մանավանդ ածականներով արտահայտված անդամների, խնդրառությամբ. ինչպես՝ «Ե՛վ միշտ գեղեցիկ, և՛ միշտ անկրկնելի, և՛ միշտ զարմանալի...» (ՄԳՁՄ, 306):

Ժամանակի պարագան կրկնվելու որոշակի յուրահատկություններ է դրսևորում բարդ ստորադասական նախադասությամբ մեջ: Այստեղ այն կրկնվում է թե՛ գլխավոր և թե՛ երկրորդական նախադասության մեջ, իսկ բարդ համաստորադասական կապակցության մեջ՝ համաստորադաս բաղադրիչներում. օրինակ՝ «Օր ու գիշեր, օր ու գիշեր հալածում էր աշնանային քամին, որ հայտնվել ու չէր հեռանում»: «Ամեն ինչ արա հանում այն կյանքի, Որ ընդհինգ հետո, հետո է գալու» (ՊՄ, 4, 252): «Թվում էր՝ հենց նոր եմ ծնվել ու նոր եմ միայն գիտակցում աշխարհի գոյությունը» (ՎՄ, 1, 69):

Կրկնված ժամանակի պարագան ավելի մեծ շեշտադրում է կրում ուղղակի խոսքում. ինչպես՝ «Բայց այսօր, չէ՞, այսօր կվճռես անելիքդ, - համառեց այրին» (ԱԹԲ, 31):

2. Տեղի պարագայի կրկնությունը: Տեղի պարագան ևս տարբեր կառուցվածքի նախադասություններում կրկնվում է յուրովի, բայց բոլոր դեպքերում այդ կրկնության նպատակը գործողության կամ եղելության տեղի ընդգծումն է, հաղորդման գործընթացում այս պարագայի նշանակալի դերի կարևորումը:

Պարզ նախադասության մեջ տեղի պարագայի կրկնությունը կարևորվում է մասնավորապես ստորոգյալի հետ ունեցած շարադասության տեսակետից և լրացում ստանալու

կամ չստանալու առումով: Տվյալ դեպքում ստորոգյալի և կրկնվող տեղի պարագայի շարադասության կապակցությամբ պետք է նշել հետևյալը. կրկնյալ և կրկնորդ պարագաները լինում են՝ ա) նախադաս. ինչպես՝ «Ո՞ր է, ո՞ր է իմ հայրենի քաղաղս...» (ՄԳՁՄ, 443): «Ամեն՛որ, ամեն՛որ, ամեն՛որ Հիմա այդ երգն է անողոք Պատգամի նման մի անհուն Օեփորում արևն իր փողով» (ԵՉՊԲ, 319, բ) հետադաս. ինչպես «Ահա թե ինչու մեզ բերին այստեղ և հատկապես այստեղ» (ԳՄՄՓ, 72), գ) իրենց լրացյալով միջարկված. ինչպես՝ «Դեպի արևելք, դեպի արևելք, մենք ընթանում ենք դեպի հեռավոր արևելք՝ Վլադիվաստոկի գծով» (ԳՄՄՓ, 85):

Տեղի պարագայի կրկնյալ և կրկնորդ ձևերը ոչ միշտ են հանդես գալիս առանց լրացումների: Երբեմն նրանք լինում են իրենց ուղեկցող լրացումով կամ լրացումներով: Ավելի հաճախ կրկնյալ տեղի պարագան լինում է առանց լրացման, իսկ կրկնորդը՝ որոշիչ լրացումով: Այս դեպքում կրկնորդական կրկնության նպատակը հենց տեղի պարագան որոշիչ արտահայտած հատկանիշով համայրելն է: Այսպիսին է վերը բերված վերջին օրինակը (...դեպի հեռավոր արևելք): Բերենք մեկ այլ օրինակ՝ «Հոլանդացիք ծովի՛ց, ամենագո՞ր ծովից Հող են հափշտակում» (ՊՍ, 2, 126): Երբեմն էլ կրկնվող տեղի պարագայի թե՛ կրկնյալ և թե՛ կրկնորդ ձևերը ստանում են անվանական համասեռ լրացումներ՝ որոշիչներ, հատկացուցիչներ ու բացահայտիչներ. ինչպես՝ «Երկար դարերով զընում ենք դեպ վեր Հայոց լեռներում, Դրժար լեռներում» (ՀԹԸԵ, 38): «Այնտե՛ղ՝ նրա օղակառույց ապարանքների մեջ, այնտե՛ղ՝ նրա բարձր կախաղանավոր պարտեզներում, մի ծամանակ հայոց մի երիտասարդ թագավորի սիրով զվարճանում է աշխարհի ամենամեծ կախարդը՝ Շամիրամը» (ՐՍ, 286): «...Որը հիմա էլ կանգնած է իմ սրտի վրա, իմ սրտի վրա» (ԳՄՄՓ, 53):

Պարզ նախադասության մեջ տեղի պարագայի մասնակի կրկնություն կարելի է համարել սեռական հոլովով արտահայտված տարբեր գոյականների և տեղի կամ տարածական կապի կապակցության պարբերաբար կրկնությունը. օրինակ՝ «Եվ պարբերաբար եվրոպական պետությունների շահերի դիմաց, լուսավոր մարդկության խղճմտանքի դիմաց, ամբողջ հայության մորմոքվող սրտի դիմաց ծառանում է էդ արյունոտ ու արցունքոտ հարցը» (ՀԹԸԵ, 435)**:

Տեղի պարագան յուրովի է կրկնվում բարդ համադասական նախադասության մեջ՝ պայմանավորելով վերջինիս իմաստային ու կառուցվածքային որոշ յուրահատկություններ: Այսպես՝ համադասական նախադասության տարբեր բաղադրիչներում նույն տեղի պարագայի գործածվելով է հաճախ պայմանավորվում լրացյալ բայ-ստորոգյալների բառական կամ խոսքային հակառակությունը. ինչպես՝ «Նա՛ այդ շան որդին, այս ծառի մտտով ամեն օր շրջկենտրոն է սլանում և ծառի մտտով ետ դառնում, բայց ծառը չի նկատում» (ՄԳՁՄ, 301): Նմանապես ստորոգյալները կարող են լինել նաև հարիմաստ բառեր. ինչպես՝ «Նրա առջև կործանվել են եզրիտական մամլուկների գնդերը, Եվրոպայի շատ մեծ քաղաքներ ու աշխարհներ են ծունկի եկել նրա առջև, իսկ այս հայերը հնազանդվել չզիտեն, դիմադրում են չփշրվող որձաքարի պես» (ՍԽՄՍ, 3, 385): «Այստեղ տոն է եղել, հող ու ջրի հանդես, Աստվածներն են այստեղ խրախճանել հարբած, Եվ ամառն իր խարտոյաջ գիսակները քանդել, Նրանց համար այստեղ պարել է մերկ ու բաց» (ՎԴԱՄ, 72):

Հարկ է նշել, որ բարդ համադասական նախադասության մեջ նույն բառով արտահայտված տեղի պարագաները ոչ միշտ են ունենում միևնույն նշանակյալը. երբեմն դրանք տարբեր տեղ են ցույց տալիս: Այս դեպքում նույն բառով արտահայտված տեղի պարագաները ոչ թե կրկնություն են, այլ շարահյուսական համանուններ. օրինակ՝ «Նա մտավ մի նեղ փողոց, դուրս եկավ մյուս լայն փողոցը՝ բազմությունը ետևից» (ՎԹԿՀՀԾՎ, 87): Այստեղ խոսքը, բնականաբար, ոչ թե միևնույն, այլ երկու տարբեր փողոցների մասին է, ուստի փողոց և փողոցը ձևերը շարահյուսական համանուններ են: Ավելացնենք նաև, որ երբեմն էլ տեղի պարագայի կրկնությունն իրացվում է բարդ համադասական նախադասության միայն մի բաղադրիչում՝ նմանվելով պարզ նախադասության մեջ արտահայտվող կրկնությանը. ինչպես՝ «Այն, բոլոր կողմերում է թախիծ, Ամեն տեղ է փոփած տրտմություն, Եվ

** Կրկնյալ և կրկնորդ տեղի պարագաները երբեմն ձևավորվում են ընդհանուր կապով, որը գործածվում է կրկնորդ բառից հետո. օրինակ՝ «Երազանման թիթեռների բույրերը ճախր էին առնում կանաչի ու կանաչի մեջ Լիլիթի շուրջը» (ԱԻ, 3, 194):

արդյոք՝ որտեղի՞ց, որտեղի՞ց Սպասեմ ավետիք ու խնդում...» (ՎՏԲ, 117):

Եվ վերջապես, ստորոգայլը կրկնվում է նաև երկկամ ու միակամ կազմիչներով բաղադրված բարդ համադասական կառույցներում, ընդ որում՝ այս դեպքում կրկնյալ և կրկնորդ տեղի պարագաները հանդես են գալիս՝ ա) այդ երկկամ ու միակամ բաղադրիչ նախադասություններում. ինչպես՝ «Լո՛ւտ էր շորքը այնպես, շորքը ոչ ոք չկար» (ԵՁՊԲ, 266), և բ) միայն մի եզրում՝ երկկամում կամ միակամում. ինչպես՝ «Եկե՛ք, եկե՛ք, թոչուններ, Այստեղ լավ է, այստեղ տաք» (ՎԴԱՄ, 17):

Տեղի պարագան ոչ մեծ հաճախականությամբ կրկնվում է նաև բարդ ստորադասական նախադասության մեջ՝ հանդես գալով թե՛ գլխավոր և թե՛ երկրորդական նախադասության մեջ: Գլխավոր նախադասության մեջ կրկնորդ տեղի պարագայի երևան գալը հիմնականում պայմանավորված է գլխավոր կամ կրկնյալ ձևի այս կամ այն որակական Քատկանիչը համապատասխան ստորադաս նախադասությամբ լրացնելու պահանջով. օրինակ՝ «Ինձ քչեցին մի տեղ, Մի տեղ, Որ կարող էր լինել մահը՝ կյանքի դեպի» (ԵՁՊԲ, 177): Նմանապես երկբաղադրիչ բարդ ստորադասական կապակցության երկրորդական նախադասության մեջ էլ տեղի պարագան կրկնվում է իր կրկնորդը որոշիչով լրացնելու համար. օրինակ՝ «Նա զգաց, որ իր մտքերը գնում են հեռու, շատ հեռու՝ թափանցելով քաղաքատնտեսության խորքերը» (ԱՃՔ, 67): Երբեմն էլ ստորադաս նախադասության մեջ տեղի պարագայի կրկնությունը լինում է սուկ կերպավորական բնույթի՝ այդ պարագայի բառական նշանակությունն ընդգծելու նպատակով: Նման կրկնությամբ տեղի պարագան հանդես է գալիս թե՛ երկբաղադրիչ կառույցի ստորադաս նախադասություններից մեկում. օրինակ՝ «Մի՞թե Աստված է պատժել պոետին, Որ թեկուզ պաշտեն, բայց չմտենան, Որ ընկնեն գիրկն էլ ամենահետին, - Ինձ հեռուից սիրեն, ա՛խ, հեռուից միայն» (ՀԾ, 3, 79):

Տեղի պարագան յուրատիպ է կրկնվում նաև խոսքի ինքնատիպ դրսևորումներից մեկում՝ երկխոսության մեջ: Այստեղ երկու կամ ավելի անձանց միջև ծավալվող խոսակցության ընթացքում հարց ու պատասխանի մեջ հաճախ զրույցին մասնակից բոլոր գործող անձանց խոսքում տվյալ տեղի պարագան գործածվում է, երբեմն էլ նույնիսկ հաղորդու՝ սահմանափակվում է միայն դրա արտահայտությամբ: Այս դեպքում տեղի պարագան դառնում է հաղորդակցման հիմքը և իր կրկնորդական գործածությամբ կազմում է թերի նախադասություն: Այսպես՝

« - Ես գնում եմ Թիֆլիս:

- Թիֆլիս՞: Ինչու՞» (ԴԴԵԺ, 7, 221):

3. **Ձևի պարագայի կրկնությունը:** Ձևի պարագան ցույց է տալիս գործողության կատարման ձևը, գործողության որակը, բնույթը և այլն, պատասխանում է *ինչպե՞ս* հարցին: Ձևի պարագային ևս բնորոշ է տարբեր կառուցվածքի նախադասությունների մեջ կրկնվելու Քատկությունը, և ամեն դեպքում այդ կրկնությունն ունենում է իր նպատակը:

Բավական լայն է ձևի պարագայի արտահայտության պլանը, բայց կրկնվում են այս պարագայի միայն մի քանի իրացումներ կամ դրսևորումներ, և դա ավելի ակնառու երևում է պարզ նախադասության մեջ: Այստեղ՝ «...կրկնող ձևի պարագան հիմնականում արտահայտվում է՝

ա) *ձևի մակբայով*. այս դեպքում կրկնյալ և կրկնորդ պարագաները գործածվում են կողք կողքի, առանց լրացումների և կամ էլ միջարկվում են կրկնորդի լրացումով. օրինակ՝ «Ա՛խ, չարաչար, չարաչար տառապեցի» (ԱԻ, 3, 63):

բ) *Ածականով*. ածական ձևի պարագան կրկնվելիս հիմնականում կերպավորական նշանակություն է ունենում, որին ավելի հաճախ նպաստում է կրկնյալի բացականչական և կրկնորդի պատմողական երանգ ունենալը. ինչպես՝ «Ավգին՝ գյուղի չոբանը, ոչխարը թողած, տխո՛ւր, տխուր գալիս է» (ՄԳՁՄ, 8):

Ածական ձևի պարագայի կրկնյալը և կրկնորդը երբեմն էլ տարբերվում են համեմատության աստիճանով. կրկնյալը լինում է դրական, իսկ կրկնորդը՝ գերադրական աստիճանի՝ արտահայտված բառակազմական, երբեմն էլ նկարագրական եղանակով. ինչպես՝ «Եվ երկուսս էլ մի օր՝ ուսանողական համազգեստն առաջին անգամ հագած, փողոց դուրս եկանք, թև թևի տված, երջանիկ, ամենաերջանիկ» (ԱԻ, 3, 343): «Նրանք

ամուր, շատ ամուր ու շատ երկար իրար ձեռք սեղմեցին...» (ՎՍ, 1, 145)^{***}:

գ) *Անկախ դերբայներով*, մասնավորապես անորոշ դերբայի գործիական հոլովով. ինչպես՝ «Հարցնելով, հարցնելով հասնում են թագավորանհիստ քաղաքը» (ԱԻ, 3, 288):

դ) *Գոյական ստորադաս անդամով բայական բառակապակցությամբ*. այս դեպքում ստորադաս անդամի կրկնվելը անհրաժեշտ է լինում, իսկ բայական գերադաս անդամի կրկնվելը՝ ոչ անհրաժեշտ, ուստի կատարվում է ոճական միավորում. դերբայը գործածվում է մեկ անգամ՝ դառնալով ընդհանուր գերադաս անդամ գոյական լրացումների համար. օրինակ՝ «Դեռ չփորձած մորիկ ու հով, Դեռ չտված ու չստացած, Մախրում էի դաշտերի մեջ, Երազներով, երազներով Հարստացած» (ՀՍՔԵ, 67): Այստեղ *երազներով, երազներով հարստացած* ձևի պարագան համարժեք է *երազներով հարստացած, երազներով հարստացած* կրկնված ձևի պարագաներին:

Ընդհանրապես բառակապակցությամբ արտահայտված ձևի պարագային բնորոշ է մասնակի կրկնությունը, այն է՝ կրկնվելիս բառակապակցությունն անդամների որոշ փոփոխություն է կրում. ինչպես՝ «Թե չէ մեր Էրզրի օրենքով ջահելները *աչքները փակ-փակ, փակ աչքերով* գալիս կանգնում էին դեմ-դիմաց» (ՄԳՁՄ, 480):

ե) *Գոյականի գործիական հոլովով*. ինչպես՝ «Սակայն սիրո՛ւ, Սիրո՛ւ՛ եմ ահա ես ողջունում Այս հեռաստանը՝ բացված մեր դեմ» (ԵՉՊԲ, 397):

զ) *Կապի ու կապի խնդրի կապակցությամբ*. այս դեպքում կրկնյալ և կրկնորդ պարագաները միմյանցից բաժանվում են արտասահական տևական դադարով. ինչպես՝ «Այո՛, պետք է սիրես *ի՛նձ պես. ի՛նձ պես*. - շեշտեց Գարեգինը...» (ՆԴ, 330):

Ձևի պարագայի կրկնության հետ կապված՝ համատեքստային որոշ պայմաններ հաղորդման բովանդակությունը հարստացնում են իմաստային այնպիսի նրբերանգներով, որոնք պատկերավոր ու արտահայտիչ են դարձնում խոսքը: Այսպես, օրինակ, որոշ տարբերություն կա ձևի պարագայի անշաղկապ և շաղկապով (և, ու) կրկնվելու միջև: Անշաղկապ կապակցության համեմատությամբ (վերը բերված օրինակները հիմնականում այսպիսին են) շաղկապավոր կրկնված ձևերը ավելի շատ են օժտված հուզաարտահայտչականությամբ. ինչպես՝ «Էլ բավական է. Թախիծն այս ցավոտ *Անվերջ ու անվերջ Սիրտս է ծվատում*» (ՎԴԱՄ, 62): Սա ավելի շատ ոճական կրկնություն է: Երբեմն շարահարական կապակցումը նույնպես ստեղծում է արտահայտչականություն, բայց, իհարկե, նվազ չափի. օրինակ՝ «Մհեր կեցավ *անպատասխան, Անպատասխան* լեռ անասան» (ԱԻ, 2, 101): Կամ՝ երբ կրկնյալ և կրկնորդ ձևի պարագաներն ունեն տարբեր երանգ, ուղեկցվում են համանիշ վերաբերականներով, դրանցից մեկը, մասնավորապես կրկնորդը, ստանում է որոշիչ լրացում, ձևի պարագայի երկու ձևերի միջև ստեղծվում է տարածածածամանակային թվացյալ հեռավորություն, որի հետևանքով խոսքը դառնում է տպավորիչ ու ներգործող: Օրինակ՝ «Իմ բերանն է փակվում հազա՛ր ու մի ձևով, Իր *համբույրո՛ւ՛մ անգամ, Սո՛ւտ համբույրով նույնիսկ*» (ՊՍ, 2, 90):

Ինչ վերաբերում է բարդ նախադասության մեջ ձևի պարագայի կրկնությանը, ապա պետք է նշել, որ համադասական նախադասության մեջ այս պարագան ավելի շատ է կրկնվում, քան ստորադասական նախադասության մեջ: Նմանապես ձևի պարագայի կրկնության իրացման առումով ընդհանուր ենթակալով բարդ համադասական նախադասությունը գերազանցում է տարբեր ենթականերով բարդ համադասական նախադասությանը: Ընդհանրապես բարդ համադասական նախադասության մեջ ձևի պարագան կրկնվում է՝ ա) կա՛մ մի բաղադրիչ նախադասության մեջ որպես միևնույն ստորոգյալի լրացում և բ) կա՛մ էլ տարբեր բաղադրիչ նախադասությունների մեջ՝ իբրև տարբեր ստորոգյալների լրացումներ: Կրկնյալ և կրկնորդ ձևի պարագաները համադասական նախադասության միևնույն բաղադրիչում արտահայտվում են թե՛ մեկ բառով և թե՛ բառակապակցությամբ. ինչպես՝ «Եվ արձակեց եզները, սրբեց բաց ճակատն ու *դադրա՛ծ, դադրած* նստեց սանդ՝ քարի վրա» (ՄԳՁՄ, 5): «Խոսքերը վրճիտ են ու խորունկ, - *Այնպես պա՛րզ, այնպես պա՛րզ*

^{***} Հաճախ ստորոգյալը ստանում է ածականական բառակապակցությամբ արտահայտված այնպիսի բազմակի ձևի պարագաներ, որոնց ստորադաս անդամը լինում է միևնույն *ածական- կերպով* կապակցության կրկնությունը. ինչպես՝ «*Սպանիչ կերպով* մեծավարի, *սպանիչ կերպով* հոգստո՛ւ՛ մա մի պահ նայեց ինձ...» (ՀՄՕ, 263):

ես ժպտում. Եվ ահա տրտունջ ու մտորմունք Հանգզում են մրկկված իմ սրտում» (ՎՏԲ, 153):

Ինչպես նշեցինք, կրկնյալ և կրկնորդ ձևի պարագաներն արտահայտվում են նաև բարդ համադասական նախադասության տարբեր բաղադրիչներում՝ դառնալով տարբեր ստորոգյալների լրացումներ: Ձևի պարագայի մեծ կրկնությունը գործառվում է մասնավորապես այն դեպքում, երբ անհրաժեշտ է մատնանշել երկու (կամ ավելի) բայական ստորոգյալների տարբեր գործողությունների մույն ձևով կատարվելը կամ անվանական ստորոգյալների՝ մույն ձևի պարագայական հատկանիշով օժտված լինելը (երբ ստորոգյալները անվանական են): Այս դեպքում կրկնյալ և կրկնորդ ձևի պարագաները մույն հարթության վրա են, լիովին համարժեք են ու համասեռ: Օրինակ՝ «Նա կամաց մտնեցավ ինձ, կամաց առավ ձեռքերս և, սաստիկ կարեկցությամբ նայելով աչքերիս, արտասանեց դողող ջանով» (ՆՌ, 273): Այս կառուցվածքում չի բացառվում ստորոգյալներից մեկի բայական, մյուսի անվանական լինելը. ինչպես՝ «Այնպես՝ գգվող է երեկոն անախ, Ծաղիկներն այնպես՝ նազով են փակվում. Ծուրջըս վառված է մի անուշ տազանապ, Մի նոր հուզում է սիրտըս մրկկում» (ՎՏԲ, 90): Նմանապես կրկնված ձևի պարագաների լրացյալ ստորոգյալները կարող են լինել նաև հականիշ բառեր. ինչպես՝ «Աշխարհի սկզբից մինչև այժմ բոլոր նոր տարիներն այդպես եկել են, այդպես էլ կգնան» (ՆՌ, 263): Բաղադրիչ նախադասություններից երկրորդում կարող է առկա լինել անվանական ստորոգյալի մասնակի գեղատուն. ինչպես՝ «Ա՛խ, ի՛նչ հեզությամբ ու բարությունք նայեց ինձ, ի՛նչ հեզությամբ ու բարությանք հաղորդակից՝ իմ ապրած վշտին ու կարոտին» (ԱԻ, 3, 360): Այստեղ կրկնված ձևի պարագան ունի բազմանդամ արտահայտություն (ի՛նչ հեզությամբ ու բարությամբ):

Բարդ համադասական կառուցում կրկնվող ձևի պարագան կարող է արտահայտվել նաև կրկնավոր բարդությամբ. ինչպես՝ «Աստղերի պես հեռանայինք Իրար գրկած՝ անուշ-անուշ, Արար աշխարհ մոռանայինք՝ Անուշ-անուշ, անուշ-անուշ» (ՀՇ, 3, 24):

Ակնհայտ է, որ ձևի պարագայի կրկնությունն արտահայտվում է նաև բազմաբարդ համադասական նախադասության ստորադասական կազմիչի կամ եզրի ստորին օղակներում՝ համաստորադաս բաղադրիչներում. օրինակ՝ «Թագավորը բաշխեց հանցավորին իր կյանքը, իսկ Հասանին դառնալով՝ հոչակեց նրան իր սիրելի մարդը ամբողջ տերության մեջ ու լավ պաշտոն տվեց, որ միշտ աշխատի ու անպակաս, ուրախ ապրի, ուրիշներին էլ սովորեցնի ուրախ ապրել աշխարհում» (ՀԹԸ, 376):

Ձևի պարագան սակավադեպ կրկնվում է նաև բարդ ստորադասական նախադասության մեջ, մասնավորապես վերջինիս գերադաս բաղադրիչում: Այստեղ սովորական բանական արտահայտությամբ կրկնյալ ձևի պարագային հաջորդում է իր կրկնորդը՝ ցուցական դերանվամբ լրացումով, իսկ այս դերանուն հարաբերյալն անխուսափելի է դարձնում ստորադաս նախադասության գոյությունը. ինչպես՝ «Ու համբուրեց ինձ մեղմով, Այնպես՝ մեղմով, սիրով լի, Ասես դեմքիս վրայով Սահեց թևը բլրույի...» (ԱԻ, 2, 29):

Ընդհանրապես ձևի պարագան գլխավոր նախադասության մեջ կրկնվելիս ամբողջ նախադասության բովանդակությունը համալրում է իմաստային այլ նրբերանգներով, իսկ երկրորդական նախադասության (կամ նախադասությունների) մեջ կրկնվելիս՝ այլ նրբերանգներով: Ակնհայտ է, որ ձևի պարագան սովելի հաճախ կրկնվում է ընդհանուր երկրորդականով բազմաբարդ ստորադասական նախադասության գլխավոր նախադասություններում. ինչպես՝ «Նա հետզհետե անում էր, հետզհետե ավելի ահռելի կերպարանք էր ստանում, որքան անում էր տիրող լուսավորությունը» (ՐԱ, 288): Երբ այս կառուցում կրկնվող ձևի պարագան արտահայտվում է ցուցական դերանվամբ, վերջինս նաև հարաբերյալ՝ հ դեր է կատարում՝ անխուսափելի դարձնելով ընդհանուր ստորադաս նախադասության գոյությունը. ինչպես՝ «Այնպես մտերմիկ էր տոնը, այնպես ջերմ, որ ամբաստանյալը ակամա նայեց» (ՆՌ, 366):

Երկրորդական նախադասության կազմում ձևի պարագայի կրկնությունն իրացվում է հիմնականում բարդ համաստորադասական կապակցության ստորադաս բաղադրիչներից մեկում՝ իբրև վերջինիս ստորոգյալի լրացում. օրինակ՝ «Այն աստիճան աղեկտուր էր նրա ձայնը, որ ցնցվեցի, և սիրտս կարծես սաստիկ, սաստիկ ճմլեցի» (ՆՌ, 274): «Եվ այնպես են ինձ անհարմար ու վատ զգում, կարծես կոնջ բարձրակրունկ կոշիկ հագել Ու վազում եմ վերևից ցած, վերևից ցած» (ՊԱ, 2, 173):

Կրկնյալ և կրկնորդ ձևի պարագաները սակավադեպ արտահայտվում են նաև բարդ

ստորադասական նախադասության գերադաս և ստորադաս բաղադրիչներում, երբ դրանց ստորոգյալների գործողությունները բնութագրվում են նույն հատկանիշով. ինչպես՝ «Ես հայերեն չգիտեմ, որովհետև մեր տանը հայերեն ոչ ոք չի խոսում...» (ՆՌ, 189):

Ձևի պարագան կրկնվում է նաև մեջբերվող նախադասությամբ կապակցության մեջ՝ թե՛ հեղինակի խոսքում և թե՛ ուղղակի խոսքում. օրինակ՝ «Սիրտն աղջըկա փղձկաց, Բառ չէր գտնում նա կարծես, Հագիվ, հագիվ շշմջաց.- Արժանի՞ եմ միթե ես...» (ԳԱ, 272):

Ձևի պարագան կրկնվում է նաև ինքնուրույն նախադասությունների կապակցության մեջ, որտեղ կրկնորդ պարագան կարող է հանդես գալ որպես առանձին նախադասություն. ինչպես՝ «Ե՞րբ պիտի ես բերանքսիվայր գետին փովեմ: Բերանքսիվայր: Փովեմ մնա՞մ» (ՊԱ, 2, 173):

4. *Չափի պարագայի կրկնությունը*: Չափի պարագան ևս նախադասության մեջ կրկնվում է բայց ոչ նախորդ պարագաների հաճախականությամբ: Պարզ նախադասության մեջ այս պարագայի կրկնությունը հիմնականում ոճական նշանակություն ունի. միևնույն ստորոգյալի շրջապատում կրկնվելով՝ սա շեշտում, ընդգծում է գործողության, եղելության և ընդհանրապես ստորոգային հատկանշի չափը, աստիճանը: Կրկնվող ձևի պարագան հիմնականում դրսևորվում է իմաստի սաստկացում արտահայտող չափի մակբայներով. ինչպես՝ «Եվ խոսում ենք *անվե՛րջ, անվե՛րջ, անվե՛րջ...*» (ԱԻ, 3, 352): «Մենք շատ, շատ ուրախ ենք այդ նորածնի համար...» (ԳՄՄՓ, 91): Երբեմն էլ կրկնյալ և կրկնորդ չափի պարագաները միջարկվում են իրենց լրացյալով՝ ստորոգյալով, որով այդ լրացումների բառաբերականական ինքնուրույնությունն ավելի է մեծանում, մանավանդ երբ դրանք նաև ունենում են տարբեր երանգ. ինչպես՝ «Սաստիկ հոգնել եմ, սաստիկ...» (ԲՄ, 164):

Միևնույն ստորոգյալին լրացնող չափի պարագայի յուրահատուկ կրկնություն պետք է դիտել չափի իմաստ ունեցող կրկնավոր բարդության եռանդամ գործածությունն իբրև չափի պարագա. ինչպես՝ «Թող խավարում լինի լրի՛վ-լրի՛վ-լրի՛վ» (ՊԱ, 2, 171): Սա չափի պարագայի կերպավորական կրկնությունն է:

Կրկնվող չափի պարագան ավելի հաճախ արտահայտվում է չափի մակբայներով ու որոշակի որակական ածականներով. ինչպես՝ «Դարձյալ, դարձյալ ուղարկել ես և հետն էլ մի երկար հանդիմանություն» (ՆՌ, 289): Ակնհայտ է, որ *դարձյալ, կրկին, նորից, վերստին* չափի մակբայներն ընդհանրապես արտահայտում են գործողության կրկնվելու, նորից կատարվելու իմաստ: Իսկ երբ բերված նախադասության մեր *դարձյալ*-ը կրկնվել է, գործողության վերստին կատարվելը, գործողության կրկնողությունն ավելի է շեշտվում: Ինչ վերաբերում է կրկնվող չափի պարագայի ածականով արտահայտվելուն, ապա պետք է նշել, որ այս պարագայի գործառույթով հանդես եկող որակական ածականները տվյալ դեպքում գործողության տևողության չափն են նշում և կրկնվելով՝ ավելի են ընդգծում այդ տևողությունը. ինչպես՝ «Երկար և երկար նայում էր Լիլիթ...» (ԱԻ, 3, 196):

Բարդ համադասական նախադասությունը հատկորոշվում է չափի պարագայի՝ տարբեր բաղադրիչ նախադասություններում ունեցած կրկնությամբ: Սա ավելի շատ բերականական կրկնությունն է, որ ցույց է տալիս միևնույն կառույցի տարբեր ստորոգյալների արտահայտած գործողությունների նույն չափի հատկանիշն ունենալը. օրինակ՝ «Ժանապարհորդությունից հետո գեղեցկուհին *ավելի* թարմացել էր, *ավելի* գեղեցկացել» (ԱՇՔ, 115): Ձևի պարագայի այս կրկնությունը ոճական արժեք է ձեռք բերում, երբ արտահայտվում է հարցաբարբերական դերանուններով. այս դեպքում չափի իմաստին հավելվում է խոսողի (գորղի) վերաբերմունքը. ինչպես՝ «Որքա՞ն փոխվել, որքա՞ն այլանդակվել էր նա» (ԲՄ, 243): «Ա՛խ, *ինչքա՞ն* ուրախ, *ինչքա՞ն* երջանիկ էի ես այն ժամանակ» (ՆՌ, 242): Իհարկե, չի բացառվում նման նշանակությամբ նաև մակբայով արտահայտված չափի պարագայի կրկնությունը. օրինակ՝ «Ախր, նա շա՛տ է փխրուն ու ցավոտ, Նա շա՛տ է իմը Ու... վերջի՛նս է նա» (ՎԴԱՄ, 204):

Բարդ համադասական նախադասության մեջ կրկնվող չափի պարագան միայն չափի մակբայների ու դերանունների արտահայտությամբ չի սահմանափակվում: Այն արտահայտվում է նաև *հազար* թվականի փոխանուն ձևի հոգնակի գործիականի կրկնությամբ՝ հատկանշի մեծ չափի նշումով. օրինակ՝ «Մեր քաջերեն, կտրիճներեն *Հազարներով, հազարներով* Ընկան կովում, խարույկ ելան. *Հազարներով, հազարներով* Սրի ելան ու կախաղան, *Հազարներով, հազարներով* Անթաղ կորան, գերի տարվան» (ԱԻ, 2, 118):

Եվ վերջապես, կրկնվող չափի պարագան երբեմն ընդհանուր երկրորդականով բարդ ստորադասական նախադասության բազմակի գերադաս նախադասություններում արտահայտվում է նկարագրական եղանակով՝ գործողության կամ այլ հատկանշի դրսևորման չափն արտահայտող երկու կամ ավելի բառերի կապակցությամբ. օրինակ՝ «Անսպասելի տեսարանը այն աստիճան հուզեց, այն աստիճան սաստիկ խոռովության մեջ դրեց անբախտ երիտասարդին, որ նա բոլորովին չշփոթվեցավ...» (ՐԱ, 559): Իշեմք, որ նկարագրական եղանակով արտահայտված չափի պարագան կրկնվում է նաև սովորական երկբաղադրյալ բարդ ստորադասական նախադասության գերադաս բաղադրիչում. ինչպես՝ «Այդ ուրախ, պարզամիտ պատանին ոչ սակավ անգամ վանում էր յուր տիրոջ թախծությունները նրա տխրության բուպեններում և ոչ սակավ անգամ յուր ծիծաղաշարժ բանարկություններով, որ սովորություն ուներ գործ դնել ամբողջ հասարակության մեջ...» (ՐԱ, 36):

Բարդ համաստորադասական նախադասության մեջ չափի պարագայի կրկնությունն արտահայտվում է մեծ մասամբ կառույցի ստորին օղակներում՝ համաստորադաս նախադասություններում. ինչպես՝ «Այո՛, այո՛, սիրելի Հոփսիսմե, համաձայն եմ քեզ հետ, որ ես շատ հպարտ եմ, շատ փոքրոգի և շատ հիմար, բայց...» (ՆՒ, 289):

Չափի պարագան կրկնվում է նաև խոսք կազմող ինքնուրույն նախադասություններում շեշտելով հատկանշի չափը նրա կրկնվելու, նորից կատարվելու նշումով՝ օրինակ՝ «Նորից մեջըս խոսեց ֆրանսիացին... Եվ ականա, նորից՝, ես չանացի Իմ պապերի ծայրահիմ խոհեմության, Հա՛յր Սուրբ Խոհեմության, Որին պիտի Հիմա խոստովանեմ իմ մեղքերը» (ՊԱ, 2, 209):

5. Մյուս պարագաների կրկնությունը: Մյուս պարագաները շատ ավելի քիչ են կրկնվում: Առանձնապես պետք է նշել պատճառի, նպատակի և միասնության պարագաների կրկնությունը: Պարզ նախադասության մեջ և բարդ նախադասության մեկ բաղադրիչում սրանց կրկնությունը հիմնականում կերպավորական նշանակություն ունի. շեշտում է գործողության, եղելության տվյալ հանգամանքը, իսկ բարդ նախադասության տարբեր բաղադրիչներում արտահայտվելու դեպքում շեշտվում է տալիսեր գործողությունների՝ միևնույն հանգամանքներում կատարվելը: Ահավասիկ համապատասխան օրինակներ. «Մենք ծնվել ենք. աշխարհ եկել Ոչ թե թվալ-երևալու խաբեությանը. Այլ լիճելու՛, Այն լիճելու. ինչ կանք իրոք» (ՊԱ, 2, 79): «Եթե սարով գնաս, Աշխեմին ասա՛: Էս երկու օրը կգա փետ բերելու, փետ բերելու» (ՀՄՕ, 179): «Ինչո՞ւ, աղբեր, ինչո՞ւ էս շեն աշխարհում ենք ես ապրում» (ԱԻ, 3, 237): «Ինչո՞ւ, ինչո՞ւ այս վայրագությունը» (Ա.տ., 347): «Մինչև ճամփաբաժանը ասֆալտը նախշելով եկան, հետո թեքվեցին ելվերիկով, ճամփի հետ փոշոտվեցին, ճամփի հետ ծոնովեցին ու ծառու եղան, ճամփի հետ շունչ քաշեցին սարի գլխին, ու երևաց գյուղը» (ՄԳՁՄ, 259):

Չափածո խոսքում կրկնվող պարագաներն ավելի հաճախ դառնում են իմաստի և հուզաարտահայտչական լարվածության կրողները, նպաստում են խոսքի կշռությանը ու չափական ներդաշնակության ապահովմանը: Այս դեպքում պարագաների կրկնությունը ոչ այնքան քերականական, որքան ոճական իրողություն է, ունի ավելի շատ ոճական արժեք, հանդես է գալիս որպես լեզվական արտահայտչամիջոց՝ կազմելով հարակրկին խոսք, վերջույթ, հանգույց, օղակ, գուգապատկություն, հակադրություն և այլ բանադարձումներ:

Պարագաները հարակրկնություն են կազմում բանաստեղծական տողերի սկզբում ներդաշնակ կրկնվելով: Կամ կրկնությամբ հանդես են գալիս զրեթե բոլոր պարագաները: Այսպես՝

«Այնտեղ բոլորն են քնած,
այնտեղ արթուն աչք չկա,
այնտեղ քնած է անգամ
անքուն մայրը աղջկա» (ՌԴՊՎ, 212)

կամ՝

- «Այս պաղ աշխարհում ես տեսա միայն տառապանքի լաց,
Եղբայրների տեղ ես հանդիպեցի չար ոսոխների,
- Եվ դորա համար իմ դեմքը երբեք զվարթ չժպտաց,
- Եվ դորա համար դահիճ խոհերի ես դարձա գերի» (ՎՏ, 2, 136):

Երբեմն էլ պարագան հարակրկնություն է կազմում նախադասության մեկ այլ անդամի հետ. ինչպես՝

*«Նոր օր է բացվում ազգերի համար,-
Իմ հայրենիքում տիրում է գիշեր
Իմ հայրենիքում անթափանց խավար.
- Զարթե՛ք, վե՛ր ելեք, կենդանի ուժեր» (ՎՏԲ, 339):*

Այստեղ հարակրկնություն է կազմում *հատկացուցիչ + տեղի պարագա* կապակցությունը:

Պարագաները *վերջույթ* են կազմում չափածո խոսքի կից տողերի վերջում միայնակ կամ մեկ այլ անդամի հետ կրկնվելով, որով ուժեղացվում է խոսքի հուզական ներգործությունը. ինչպես՝

*«Էլ ո՞նց անեմ, էլ ի՞նչ անեմ է՛ն բրնձում.
Հանգիստ չունեմ, դադար չունեմ է՛ն բրնձում,
Զօրը մե՛նակ՝ չեմ դիմանում է՛ն բրնձում,
Գիշերն անտակ՝ չի լուսանում է՛ն բրնձում... (ՀԹԸԵ, 46):*

Կցորդն այն բանադարձումն է, որ կազմվում է բանաստեղծական տողի վերջին բառի՝ հաջորդ տողասկզբում ունեցած կրկնությամբ: Հետևաբար պարագաները կցորդ են կազմում կից բանատողերից մեկի վերջում և մյուսի սկզբում կրկնվելով: Այս կրկնության նպատակը տվյալ պարագայի բառական իմաստն ու նշանակությունը ընթերցողի ուշադրության կենտրոնում պահելն է: Այսպես՝ հետևյալ օրինակներում կցորդ են կազմում ձևի և չափի պարագաները.

*«Քեզ խոճարհ՝ ամեն անգամ
Գլուխ եմ տալիս խոճարհ,
Բայց ես աղքատ եմ այ՛նքան,
Այ՛նքան թշվառ քեզ համար» (ՎՏԲ, 123):*

Հաճախ պարագան կցորդ է կազմում իր լրացյալի հետ. ինչպես՝

*«Մի աղջիկ եկավ, մի մե՛նակ քաղվոր,
Գետի եզերքին շրջում է մոլոր,
Շրջում է մոլոր, խընդում ու լալիս,
Երգեր է ասում ու ման է գալիս» (ՀԹԸԵ, 189):*

Հանգույցը չափածո խոսքի կառուցման հնարանք է, այն բանադարձումն է, երբ միևնույն կառույցում համատեղում են հարակրկնությունը և վերջույթը, որոնց գործառույթով հանդես են գալիս տարբեր անդամներ: Ավելի հաճախ հանգույցի մի եզրը (հարակրկնության կամ վերջույթի եզրը) լինում է պարագա, իսկ մյուսը՝ մեկ այլ անդամ. ինչպես՝

*«Երկու դարի արանքում,
Երկու քարի արանքում
Հոգնել եմ նոր ընկերի
Ու հին ցավի արանքում» (ՀԹԸԵ, 64):*

Այստեղ հանգույց են կազմում որոշիչն ու տեղի պարագան: Իսկ հետևյալ օրինակում հանգույցը կազմվում է ժամանակի պարագայի հարակրկնությամբ ու ստորոգյալի վերջույթային կրկնությամբ. ինչպես՝

*«Ե՞րբ ես այս օրին հասա,
Ե՞րբ այս մթին ձորին հասա,
Մի բուռ դարձա կամաց-կամաց,
Աճյունիս սափորին հասա» (ՀՄԴԾ, 46):*

Երբեմն հանգույցը ձևավորվում է բանաստեղծական տողերի միջարկումով, և պարագան վերջույթ է կազմում որոշիչ կամ հատկացուցիչ լրացման հետ. ինչպես՝

*«Մաղիկնե՛ր, բացվեք ի՛մ գերեզմանին,
Դեռ իմ արցունքը ձեր մեջ կցողա,*

**Մաղիկներ, լացեք իմ գերեզմանին,
Կյանքում անծաղիկ ես շատ լաց եղա....**

**Մաղիկներ, երգեք իմ գերեզմանին,
Մենակությունից սիրտս կդողա....»** (ՀԾ, 3, 72)

Ջուզասատկությունը նախադասության (արձակ թե չափածո) վերջին բառի կրկնությունն է հաջորդի սկզբում: Այսպիսի կրկնությամբ ավելի հաճախ հանդես են գալիս պարագաները. ինչպես՝ «Կես ժամվա մեջ նրան ատես ամենաշատը մի վայրկյան: Մի վայրկյանն ի՞նչ է, որը մի վայրկյանի տված զգացմունքն ի՞նչ լինի» (ՀՄՕ, 76):

Պարագաները կազմում են նաև *օղակ*: Իսկ սա այն կրկնությունն է, երբ տաղաչափական կամ շարահյուսական միավորը սկսվում ու վերջանում է նույն բառով կամ արտահայտությամբ: Ավելի հաճախադեպ է պարագայի կրկնությամբ մեկտողյա օղակը. ինչպես՝

**«Այս գիշեր իմ սրտում, այս գիշեր,
Վարդեր են բացվում - վերքեր...»** (ՎՏ, 2, 67):

Ամփոփենք: Արդի հայերենում բայական անդամի պարագա լրացումները հաճախ են կրկնվում՝ գործածվելով միևնույն կամ տարբեր լրացյալների հետ: Արձակ խոսքում այդ կրկնությունը հիմնականում քերականական կրկնության մի դրսևորումն է, որի նպատակը գործողության տվյալ հատկանշի կամ հանգամանքի ընդգծումն է, նրա դերի կարևորումը, իսկ չափածո խոսքում այն հիմնականում ոճական արժեք ունի և երևան է գալիս որպես լեզվական արտահայտչամիջոց ու ծառայում է խոսքի հուզաարտահայտչական գունավորմանը, արտահայտվում է կրկնաբերության տարբեր իրացումներով:

Համառոտագրություններ

ԱԻ - Ավ. Իսահակյան, Երկերի ժողովածու, հ. հ. 2, 3, Երևան, 1974-75:

ԱՇԲ - Ալ. Շիրվանզադե, Քառս, Երևան, 1976:

ԳՄԾԳ - Գ. Մահարի, Մաղկած փշալարեր, Երևան, 1988:

ԳՍ - Գ. Սարյան. Բանաստեղծություններ և պոեմներ, Երևան, 1982:

ԴԴԵԺ - Դ. Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հ. 7, Երևան, 1966:

ԵԶԸԵ - Ե. Չարենց, Ընտիր երկեր, Երևան, 1983:

ԵԶԳԲ - Ե. Չարենց, Պոեմներ, բանաստեղծություններ, Երևան, 1984:

ՀԹԸԵ - Հովհ. Թումանյան, Ընտիր երկեր, Երևան, 1978:

ՀՄՕ - Հր. Մաթևոսյան, Օգոստոս, Երևան, 1984:

ՀԾ - Հովհ. Շիրազ, Քնար Հայաստանի, հ. 3, Երևան, 1974:

ՀՍԴԾ - Հ. Սահյան, Դաղձի ծաղիկ, Երևան, 1986:

ՀՍԲԵ - Հ. Սահյան, Քարասիների երգը, Երևան, 1988:

ՄԳՁՄ - Մ. Գալշոյան, Ջորի Միրոն, Երևան, 1983:

ՆԴ - Նար-Դոս, Երկեր, Երևան, 1977:

ՊՍ - Պ. Սևակ, Երկերի ժողովածու, հ. հ. 2, 4, Երևան, 1972-1973:

ՍԽՄՍ - Ս. Խանզադյան, Մյիթար Սպարապետ, Երկեր, հ. 3, Երևան, 1968:

ՍՏԲ - Ս. Տարոնցի, Բանաստեղծություններ, Երևան, 1954:

ՎԴԱՄ - Վ. Դավթյան, Անկեզ մորենի, Երևան, 1972:

ՎԹԿՀՀԾՎ - Վ. Թոթովենց, Կյանքը հին հռոմեական ճանապարհի վրա, Երևան, 1986:

ՎՍ - Վ. Սարոյան, Ընտիր երկեր, հ. 1, Երևան, 1986:

ՎՏ - Վ. Տերյան, Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, 1961:

ՎՏԲ - Վ. Տերյան, Բանաստեղծություններ, Երևան, 1985:

ԲՍ - Բաֆֆի, Սամվել, Երկերի ժողովածու, հ. 7, Երևան, 1956:

А. С. КАРАПЕТЯН - Повторение обстоятельств в современном армянском языке. - Обстоятельства - это те дополнения глагола, которые указывают на разные качества и обстоятельства действия. В предложениях они часто повторяются, указывая на повторения качества действия. В разных частотностях повторяются обстоятельства времени, места, образа действия, меры и другие. В поэтической речи повторение обстоятельств имеет стилистическое значение, участвует в образовании анафоры, концовки, симплоки, антитезы и т. д.